



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Չորեքշաբթի, Մայիս 17-ի առաւօտեան, Էնսինոյի Ս. Նահատակաց եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ մեր Թեմի հոգեւորականաց դասու համագումարը, նախագահութեամբ՝ Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի:

Համագումարը սկսաւ առաւօտեան ժամերգութեամբ եւ Հոգեւոր Խորհրդածութեամբ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր եւ մասնակցութեամբ հոգեւորականաց դասուն:

Ժամերգութեան աւարտին Առաջնորդ Սրբազանը հոգեւոր Խորհրդածութեամբ հրաւիրեց ներկայ հոգեւոր հայրերը վերանորոգ յանձնառութեամբ շարունակելու իրենց եկեղեցանուէր առաքելութիւնը:

Ժողովի ընթացքին երկու դասախօսութիւններ տրուեցան: Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան խօսեցաւ «Տիեզերական երեք ժողովներ» նիւթին մասին: Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան դասախօսեց «Ս. Երրորդութեան Վարդապետութիւնը» նիւթին մասին:

Համագումարը օրակարգի վրայ ունէր մեր եկեղեցիներու եւ ընդհանրապէս մեր Թեմի հոգեւոր, կազմակերպչական ու այժմեական հարցերը, որոնց լուծման համար տրուեցան համապատասխան որոշումներ:

Համագումարը նաեւ բանաձեւեց առաջարկներ եւ ծրագիրներ, ներկայացուելու համար Ազգային Երեսփոխանական Ժողովի 34-րդ նստաշրջանին:

ON THE EVE OF THE REPRESENTATIVE ASSEMBLY

ONE-DAY CLERGY CONFERENCE

On the morning of Wednesday, May 17, our Prelacy Clergy held a one-day conference at Holy Martyrs Church in Encino, under the auspices of His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

The conference began with Morning Prayer services led by the Prelate and with the participation of the clergy order.

Following Prayer services, the Prelate called on the Reverend Fathers to continue their mission with renewed commitment.

During the conference, there were two lectures given. Very Rev. Fr. Muron Aznikian spoke on the three Ecumenical Councils, and Very Rev. Fr. Barthev Gulumian spoke on the doctrine of the Holy Trinity.

The agenda of the conference included spiritual, organizational, and other issues affecting our church and in general, and decisions were made accordingly.

Also discussed were suggestions and plans to be presented during the 34th Representatives Assembly to be held on May 19-20.

ՖՐԵՉՆՈՅԻ Ս. ԵՐՐՈՐԴԻԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ՊԱՏՈՒԷ ՀԱՅ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐԸ

Կիրակի, Մայիս 21-ին, Ֆրենզլոյի Սուրբ Երրորդութիւն Մայր Եկեղեցւոյ 7-րդ տարեկան գնահատանքի ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ սրահին մէջ, ի պատիւ Ֆրենզլոյի եւ Բլոքիսի երկրորդական վարժարաններէն հայ շրջանաւարտներուն:

Ճաշկերոյթին ներկայ պիտի ըլլան շրջանաւարտներուն ծնողներն ու բարեկամները: Պիտի իրագործուի գեղարուեստական յայտագիր:

Ձեռնարկի աւարտին պիտի կատարուի շրջանաւարտներու ներկայացում եւ գնահատագրերու տուչութիւնը:

Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վահան Քիւյ. Կոստանեանի եւ Հոգաբարձութեան կողմէ գնահատագիրներ պիտի տրուին շրջանաւարտներուն: Նմանապէս շնորհաւորագիրներ պիտի յանձնուին Congressman George Radanovich-ի, Senator Chuck Poochigian-ի եւ Council member Tom Boyajian-ի կողմէ:

Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան ներկայ պիտի ըլլայ ձեռնարկին, իբրեւ ներկայացուցիչը Թեմիս բարեջան Առաջնորդ Սրբազան հօր, եւ պիտի փոխանցէ Սրբազանին շնորհաւորութիւններն ու օրհնութեան խօսքը:

Յայտնենք, որ Հայր Սուրբը Կիրակի առտու ներկայ պիտի ըլլայ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ արարողութեանց եւ պիտի քարոզէ ձընթացս Ս. Պատարագի:

HOLY TRINITY CHURCH PARISH HONORS ARMENIAN GRADUATES IN FRESNO

On Sunday, May 21, Fresno's Holy Trinity Church will hold its 7th annual appreciation luncheon in honor of Armenian High School and College graduates of Fresno and Clovis. In attendance will be the graduates parents and friends. The reception will also feature an artistic program.

During the reception, Rev. Vahan Gosdanian, Pastor, and Board of Trustees members will present certificates of appreciation to the graduates. Also presenting certificates will be Congressman George Radanovich, Senator Chuck Poochigian, and Council member Tom Boyajian.

Very Rev. Fr. Muron Aznikian will represent the Prelate at the event and deliver the Prelate's congratulations and blessings.

On the morning of the same day, Fr. Muron will be present at Holy Trinity Church during Holy Mass where he will deliver the sermon.
